ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայաստանյան իրականության մեջ ձևավորվել է ուղղագրական բառարանների որոշակի ավանդույթ: Վերջին տասնամյակներում լույս են տեսել զգալի թվով նման բառարաններ, բառգրքույկներ, բառացանկեր (Ա. Ղարիբյան, Հովի. Բարսեղյան, Ռ. Իշխանյան, Հ. Հարությունյան, Պ. Բեդիրյան, Ռ. Նազարյան, Ա. Գյոդակյան և ուրիշներ): Թվում էր, թե նման բառարանների նկատմամբ եղած պահանջը բավարարված է: Սակայն հրապարակ են իջնում Դ. Գյուրջինյանի՝ «Հայերեն բառարան-տեղեկատու. միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր», շուրջ 4000 բառարանային միավոր, (1998-2003 թթ. ունեցավ չորս հրատարակություն) և «Հայերեն բառարան-տեղեկատու. մեծատա՞ռ, թե՞ փոքրատառ» (3700 բառարանային միավոր), որոնք նվիրված են ժամանակակից արևելահայերենի ուղղագրության առավել դժվար հարցերի՝ միության գծիկի և մեծատառերի գործածությանը: Այս բառարան-տեղեկատուներն իրենց կառուցվածքով, նյութի ընդգրկմամբ, մատուցման եղանակով, գիտամեթոդական ուղղվածությամբ նորույթ են հայերեն տեղեկատու գրականության մեջ:

Ո՞րն է, մեր կարծիքով, այն արժեքավորը, որը բերում են այս տեղեկատուները:

Նախևառաջ՝ հարցի այժմեականությունն ու հրատապությունը: Գաղտնիք չէ, որ ուղղագրական այս երկու խնդիրները միշտ էլ վիճահարույց են եղել, և այսօր դրանց կանոնարկումը խիստ անհրաժեշտ է: Մանավանդ եթե նկատի ունենանք, որ ուղղագրական այս հարցերի կանոնարկմանն ուղղված որոշումները երեք-չորս տասնամյակի վաղեմություն ունեն:

Միաժամանակ հարկավոր է նշել, որ սրանք ունեն ուսումնական ձեռնարկի արժեք (հատկապես իրենց բացատրական բաժինների շնորհիվ) և սովորողի, ուսուցչի, ինչպես նաև հայերեն գրող ցանկացած մարդու համար վստահելի աղբյուր են դարձել: Հեղինակը բարեխղճորեն ուսումնասիրել է փաստական գրեթե ամբողջ նյութը, փորձել համակարգել այն, առաջադրել նոր նմուշօրինակ-կաղապարներ, տալ սահմանումպարզաբանումներ՝ մեծ բարեխղճությամբ ու պատասխանատվությամբ, չպարտադրելով ու չկաշկանդելով ընթերցողին:

Միասին, անջատ կամ գծիկով գրվող բառերի բառարան–տեղեկատուն ընդգրկում է շուրջ վեց տասնյակ նմուշօրինակ-կաղապար, որոնցից գրեթե մեկ տասնյակը քննվում են առաջին անգամ, ինչպես կրկնավոր բարդություններից՝ ինչ ու ինչ և ինձուինձ, նախադրավոր կազմություններից՝ ի շահ և իհարկե, զուգադիր բայական հարադրություններից՝ գնալ բերել և առնել փախչել, արական և իգական անձնանիշ նույնահիմք գոյականներով հարադրություններից՝ երգիչ-երգչուհի, ամսանունների զուգադրությամբ կազմված կապակցություններից՝ հունվար-փետրվար, -ա- կամ -ո- տարր պարունակող առաջնաբաղադրիչով հատվածական բաղադրություններից իսրայելա–արաբական և անգլոամերիկյան, միավորող վերջածանց ունեցող թվական առաջնաբաղադրիչով բաղադրություններից՝ մեկսենյականոց, հինգաստղանի, երեքշաբաթյա, պատճենված բառակապակցություններից՝ ռոք համերգ, շոու ծրագիր, փոփ մշակույթ և այլն: Շուրջ յոթ տասնյակ նմուշօրինակ-կաղապար է առանձնացվում մեծատառի գործածության տարբեր դեպքերի համար: Այստեղ հատկապես նոր են կրոնաեկեղեցական ոլորտի միավորների գոյությունը կարգավորող կանոնները:

Նմուշօրինակ-կաղապարներում հեղինակն առաջարկում է վերանայել որոշ բաղադրությունների գրությունը, ինչպես՝ վայ բաղադրիչով և գոյականով բաղադրվածները (հմմտ. վայ առաջնորդ, վայ լրագրող, որոնք նախկինում գծիկով են գրվել)[1], այդպես էլ՝ տեր, մելիք, շահ, բեկ և նման բաղադրիչներով անձնանունները (հմմտ. Մելիք Շահնազար, Շահ Իսմայիլ, Դավիթ Բեկ), կանոն է ձևակերպում նախա- և հետպատերազմական, հեռուստա- և ռադիոհաղորդումներ տիպի բաղադրությունների համար, կատարում բառե-

[1] Կարծում ենք խնդիրը ողջ բաղադրության ձևահիմաստային ամբողջական ընկալման մեջ է: Վայ ձայնարկություն-բաղադրիչը այստեղ զուրկ է զգացական երանգավորումից, բառայնացած է բաղադրությունը հաղորդելով հեգնական իմաստ:

րի և բառակապակցությունների գրության բազմաթիվ ճշգրտումներ և միօրինականացում:

Սակայն այնքան էլ պատճառաբանված չի թվում ոչ մետաղ տերմինի անջատ գրությունը: Բաղադրության կազմում ոչ ժխտական բառ-մասնիկն առավելապես բաղադրվում է ածականների, նաև մակբայների հետ (հմմտ. ոչ գիտական, ոչ կարևոր, ոչ միանշանակ), սակայն ոչ մետաղ-ի կարգի (գոյականով բաղադրված) սակավադեպ կազմությունների համար, կարծում ենք, ճիշտ է կից գրությունը, որովհետև ոչ-ը բաղադրության կազմում զուրկ է բառ-մասնիկի գործառույթից:

Բառային միավորները բառացանկում դասավորված են փնջերով, ինչը մեծապես նպաստում է ուղղագրական երևույթները դյուրընկալելի դարձնելուն (հմմտ. մինչբուհական, մինչդպրոցական, մինչխորհրդային, մինչկապիտալիստական, մինչպատերազմական):

Բառացանկը ներառում է ժամանակակից արևելահայերենի բառապաշարի առավելապես համագործածական շերտը (հմմտ. ազատ-արձակ, այլազգի, զինղեկ), ինչպես նաև արևմտահայերեն (հմմտ. առ հարյուր, ասդին-անդին, ինքզինքը, խոփ-խոշոր), ժողովրդական (հմմտ. խեր ու բարի, հալալ-զուլալ, բացել-խփել), բարբառային (հմմտ. թոզ ու դուման, խաբարբզիկ, խուփբերան, աղջիկ-պարոն), խոսակցական (հմմտ. մեկից մեկ, մի գլուխ) բառաշերտը, այլև տերմիններ (հմմտ. միկրոալիք, «նավ-երկիր» դասի հրթիռ, բետա-ճառագայթներ, մեգահերց):

Տեղեկատուներում առաջադրվել են մի շարք ուշագրավ կաղապարներ, որոնք ուղղագրականից բացի բացահայտում են նաև լեզվաոճական և իմաստային տարբեր իրողություններ: Ասենք, այնպիսի զուգադրություն-պարզաբանումներ, ինչպես՝ կանգառ (գոյական) - կանգառ (հրաման), կարճ ալիք (գոյական՝ «ռադիոալիք») - կարճալիք (ածական՝ կարճալիք ռադիոկայան), մեջբերել «մեջբերում անել» - մեջ բերել «մեջտեղ բերել», մեկ էլ «հանկարծ» - մեկ էլ «ևս մեկ անգամ» - մեկէլ (բրբ.) «մյուս», Վեհափառ «կաթողիկոս» և վեհափառ (ածական) «վեհատեսիլ, վեհ, փառավոր» և այլն:

Հեղինակը հիմնականում որդեգրել է գրության մեկ ձև, սակայն երբեմն տեղ է տալիս զուգաձև գրությանը, ինչպես հատուկ անունից հասարակ անուն անցման աստիճանները որոշելիս (հմմտ. հուդայի համբույր // Հուդայի համբույր կամ Վարդանանե՞ր, թե՞ վարդաններ՝ հայրենիքի և հավատի նվիրյալների մասին գրելիս, որտեղ միշտ էլ առկա է հեղինակային մոտեցումը և այլն):

Տեղեկատուները պարունակում են նաև հանրամատչելի և ճանաչողական ծավալուն նյութ (հմմտ. Կոլտ Ս. - ամերիկացի կոնստրուկտոր, զինագործ և կոլտ - ատրճանակի մի տեսակ (ստեղծողի Ս. Կոլտի անունից), Կանտոնների խորհուրդ (Շվեյցարիայի օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի պալատներից մեկը) և այլն:

Ասենք, որ Դ. Գյուրջինյանը կատարել է խիստ շնորհակալ աշխատանք, որն, անշուշտ, իր նպաստն է բերելու ինչպես կրթական գործին, այնպես էլ հետագայում նմանատիպ ծեռնարկներ ու բառարաններ կազմելուն:

Ցավով պետք է փաստել, որ բառարանագիտության հարուստ ավանդույթներ ունենալու պարագայում մեզանում զարգացում չի ունեցել բառարան-տեղեկատուի տեսակը. բայց չէ՞ որ մեծ գործերը հենվում են փոքրերի վրա: Կարող ենք արձանագրել, որ հայերեն ուսումնական և տեղեկատու գրականությունը համալրվեց փոքրածավալ, բայց կարևոր և ուշագրավ հրատարակություններով: